ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"23" 10 2018 թ. N 832-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» 2017 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագրի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, համաձայն հավելված 1-ի:

2) Թույլտվությունների հաշվառման և հատկացման գրանցամատյանի ձևը, համաձայն հավելված 2-ի

2. Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիցենզավորման գործակալության պետի տեղակալ Արայիկ Ստեփանյանին:

3. Սահմանել, որ.

1) Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունները տրամադրվում են առնվազն 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» 2017 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագրի պահանջներին և սույն հրամանին համապատասխան:

2) Թույլտվություն տրվում է ուղևորներին Ռուսաստանի Դաշնություն հասցնելու և հետադարձ ուղղությամբ մեկ երթ կամ Ռուսաստանի Դաշնության տարածքով տարանցիկ փոխադրում կատարելու համար:

3) Թույլտվությունները հատկացվում են ըստ ստացված հայտերի հերթականության և հաշվի առնելով, որ թույլտվությունները սահմանափակ քանակությամբ են, յուրաքանչյուր փոխադրողի շաբաթական հատկացվում է ոչ ավել քան մեկ թույլտվություն:

4) Սույն հրամանի թիվ 1 հավելվածում նշված փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով:

4. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիցենզավորման գործակալության պետի տեղակալ Արայիկ Ստեփանյանին՝

1) Իրականացնել թույլտվությունների հաշվառման և հատկացման գրանցամատյանի վարման աշխատանքները:

2) Ապահովել յուրաքանչյուր եռամսյակ տրամադրված թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ նշելով հայտատուի տվյալները և տրանսպորտային միջոցի տեսակը:

5. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Ս. Մամյանին սույն հրամանը տեղադրել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալի պաշտոնակատար Ա. Փամբուխչյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Հ. ԱՐՇԱԿՅԱՆ**

"23" 10 **2018թ**

ք. Երևան

Հավելված № 1
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատարի
«23» 10 2018թ. № 832 -Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ, համաձայն N 1 ձևի
2. Պետական տուրքի վճարման անդորրագիրը, որը պետք է ներառի հայտատուի ազգանունը, անունը, հայրանունը (կազմակերպության դեպքում՝ կազմակերպության անվանումը) ավտոտրանսպրտային միջոցի մակնիշը և հաշվառման համարանիշը:
3. Ավտոտրանսպրտային միջոցի (ավտոբուս, միկրոավտոբուս) հաշվառման վկայագրի պատճենը
4. Օրենքով սահմանված կարգով օգտագործման իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի համար համապատասխան պայմանագրի պատճենը

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն

(կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ
կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանունը հայրանունը)

(կազմակերպության գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ
կամ ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը)

(հեռախոսահամարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ _____ մակնիշի _____ հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցին (ավտոբուսին, միկրոավտոբուսին) տրամադրել _____ երթուղով, դեպի Ռուսաստանի Դաշնություն (Ռուսաստանի Դաշնությամբ տարանցիկ) միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրում _____/_____ (տրանսպորտային միջոցի նստատեղերի քանակը (առանց վարորդի նստատեղի)/ փոխադրվող ուղևորների քանակը) իրականացնելու մեկանգամյա թույլտվություն:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը _____ թերթ:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

_____ _____ _____թ.

Հավելված № 2
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատարի
«23» 10 2018թ. № 832 -Ա հրամանի

ԳՐԱՑԱՄԱՏՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ

NN h/h	Թույլտվության		Տրանսպորտային միջոց				Փոխադրման երթուղին	Ուղևորների քանակը	Փոխադրողի անվանումը	Ստորագրություն
	համարը	տրամադրման օրը	տեսակը (միկրոավտոբուս, ավտոբուս)	մակնիշը	հաշվառման համարանիշը	նստատեղերի քանակը				
1.										
2.										
3.										
4.										
5.										
6.										
7.										
8.										
9.										
10.										
11										
12.										
13.										